

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁ-ՀԵՌԱԳՐԵՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (ՎԱՏԻԿԱՆ) ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (ԺՆԵՎ)՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԱՀԱԾ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ծանրորեն մտահոգված լիբանանահայության վիճակով, նոյեմբերի 2-ին հետևյալ ուղերձ-հեռագրերը հղեց Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապին և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրին.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ

Հռոմ-Վատիկան

Ավելի քան երեք տարիներից ի վեր Լիբանանի ողբերգական վիճակը լուրջ մտահոգություն է պատճառում նաև Մեզ: Մենք աղոթում ենք սուրբ գրական այդ երկրի ներքին խաղաղության ու քրիստոնյա և մահմեդական համայնքների համերաշխ գործակցության համար:

Այս օրերին խոր վշտով տեղեկացանք, թե հոկտեմբեր 3—10-ի ռմբակոծումները առավելապես Բեյրութի հայաբնակ թաղերին պատճառել են հարյուրավոր մահեր ու վիրավորվածներ և բազմահազար հայ ընտանիքներ մնացել են առանց բնակարանի, զուրկ ապրելու տարրական միջոցներից:

Իբրև առաջին սպասավորը հայ առաքելական եկեղեցու, Ձերդ Սրբությանն ենք ուղղում Մեր եղբայրական խնդրանքը, որ աղոթեք Լիբանանի անմեղ հայ զոհերի հոգիների համար և Ձեր հեղինակավոր խոսքը և հորդորը լսելի դարձնեք լիբանանյան որոշ շրջանակներին, ի պաշտպանություն Լիբանանի հայ կրոնական համայնքի ու հավատացյալների;

Թող բարին Աստված ավելի լույս իջեցնի Լիբանանի վրա, և մահմեդական ու քրիստոնյա համայնքները եղբայրացած ողջունեն իրենց վաղվա կյանքի խաղաղ ու երջանիկ լուսաբացը:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 նոյեմբեր 1978 թ.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Ժընև

Ավելի քան երեք տարիներից ի վեր Լիբանանի ողբերգական վիճակը լուրջ մտահոգություն է պատճառում նաև Մեզ, և միշտ աղոթել ենք սուրբ գրական այդ երկրի ներքին խաղաղության ու մահմեդական և քրիստոնյա համայնքների համերաշխ գործակցության համար:

Այս օրերին Անթիլիասի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հաղորդումից խոր վշտով տեղեկացանք, թե հոկտեմբեր 3—10-ի ռմբակոծումները առավելապես Բեյրութի հայաբնակ թաղերին պատճառել են հարյուրավոր մահեր ու վիրավորվածներ, և բազմահազար հայ ընտանիքներ մնացել են առանց բնակարանի՝ զուրկ ապրելու տարրական միջոցներից, մանավանդ լիբանանյան որոշ շրջանակների հայ համայնքի դեմ տրամադրությանց հետևանքով:

Իբրև առաջին սպասավորը հայ եկեղեցու, Ձեզ ենք ուղղում Մեր եղբայրական հրավերը և խնդրանքը, որ բացառիկ մի կարգադրությամբ հաճեք տնօրինել անհրաժեշտը, որպեսզի Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը շուտափույթ կերպով բարոյական և նյութական կարևոր օգնություն փութացնի Բեյրութի հայ համայնքի աղետյալներին:

Թող բարին Աստված ավելի լույս իջեցնի Լիբանանի վրա, և մահմեդական ու քրիստոնյա համայնքները եղբայրացած ողջունեն իրենց կյանքի խաղաղ ու երջանիկ լուսաբացը:

Ձեզանից սպասում ենք բարի լուրեր:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 նոյեմբեր 1978 թ.